ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ, ՏՊԻՉՆԵՐԻ, ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ, ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2023/4-1

ք. Երևան

«20» 02 2023թ.

Պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս. Հովհաննիսյանի, մի կողմից, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, «Մանվել Ջավալյան» ԱՁ-ն, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի, տպիչների, պատճենահանող սարքերի, անխափան սնուցման աղբյուրների պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը[15.2].

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[16.1]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[18.1]:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է. (1229840 դրամ)

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է. (1537300 դրամ)

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

ՄԳ/ՆԳ վերոգրյալ բանաձևում համաձայն ընթացակարգի արդյունքների - 0.8

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Պետական պահպանության ծառայության
ք. Երևան,Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ Ս. Հովհաննիսյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Մանվել Ջալավյան>> ԱՁ
ք. Երևան Մոսկովյան 25 3/1
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

ԱՁ Մ. Ջալավյան

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50311120/1	Տես ստորև	դրամ	1000000	1	Պռոշյան 1-ին փակուղի 20	Ծառայության մատուցումը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Պետական պահպանության ծառայության
ք. Երևան,Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

ԿԱՏԱՐՈՂ
<<Մանվել Ջալավյան>> ԱՁ
ք. Երևան Մոսկովյան 25 3/1
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

Պետ Ս. Հովհաննիսյան

ԱՁ Մ. Ջալավյան

համար	տեխնիկական բնութագրերը	ների մատուցման միավոր գները հաշվարկված ըստ բանաձևի
	Համակարգչի	
1.	Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում)	1600
2.	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows,8,8.1,10 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus, Antivirus)	3920
3.	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը LGA 478/775/1050/1150/1155/B75/1155/1200	5600
4.	Մայրական տպասալի MB նորոգում /ներառյալ պահեստամասերը/	5600
5.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /775/ տպասալը	16000
6.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /945/ տպասալը	16000
7.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /1150/ տպասալը	24000
8.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /1155/ տպասալը	24000
9.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /1156/ տպասալը	24000
10.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /1151/ տպասալը	24000
11.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /1200/ տպասալը	39200
12.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /1700/ տպասալը	39200
13.	Մայրական տպասալի MB փոխարինում ներառյալ LGA /2066/ տպասալը	39200
14.	Բիոսի (Bios) մարտկոցի փոխարինում	1600
15.	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 478 2GHz, 3.0GHz, LGA 775 3.0GHz, 3.2GHz. Core 2 Duo E7300, Core 2 Duo E7400,Core 2 Duo E7500, Core 2 Duo E8300, Coer 2 Duo E8500, Core 2 Quad Q9500	11200
16.	CPU փոխարինում ներառյալ ինտել **Core i3 ոչ պակաս 8-րդ սերնդի** համապատասխան պրոցեսորով	39200
17.	CPU փոխարինում ներառյալ ինտել **Core i5 ոչ պակաս 8-րդ սերնդի** համապատասխան պրոցեսորով	48000
18.	CPU փոխարինում ներառյալ ինտել **Core i7 ոչ պակաս 8-րդ սերնդի** համապատասխան պրոցեսորով	72000
19.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՀՑ (DDR2 1GB 667/800MHZ)	4000
20.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՀՑ (DDR2 2GB 667/800MHZ)	6400
21.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1066/1333ՀՑ (DDR3 2GB 1066/1333MHZ)	8000
22.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մ 1066/1333ՀՑ (DDR3 4GB 1066/1333MHZ)	8800
23.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 8192Մ 1066/1333ՀՑ(DDR3 8GB 1066/1333MHZ)	12800
24.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4096Մ 2400ՀՑ(DDR4 4GB 2400MHZ)	8800
25.	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8192Մ 2400ՀՑ(DDR4 8GB 2400MHZ)	15200
26.	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն/Նվիդիա ԴԴՌ3 2Գբ ՊիԻԻԱյ-Էքսպ (nvidia, Ati Redeon/Nvidia DDR3 2Gb PCI Exp 128bit)	23200

27.	HDD փոխարինում ներառյալ HDD 1SP,7200RPM, SATA3	20000
28.	SSD 480 GB- ի փոխարինում ներառյալ SSD 480 GB	16000
29.	SSD 960 GB- ի փոխարինում ներառյալ SSD 960 GB	32000
30.	CD-RW/DVD-RW-ի փոխարինում ներառյալ (CD-RW/DVD-RW)	6400
31.	Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում) նորով	3200
32.	Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm, 450W) ներառյալ սնուցման բլոկը	4800
33.	Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 550W) ներառյալ սնուցման բլոկը	6400
34.	Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 650W) ներառյալ սնուցման բլոկը	13600
35.	**Սնուցման բլոկի փոխարինում Thermalthake կամ համարժեքը (Cooler 120mm 700W) ներառյալ սնուցման բլոկը**	36000
36.	Ցանցային քարտի տեղադրում PCI կամ PCI-e 10/100/1000 Mbps ներառյալ ցանցային քարտը, Lan Card PCI կամ PCI-e	6400
	Նոթբուքի	
37.	Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչի մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում	4000
38.	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows 8,8.1,10 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus, Antivirus)	4000
39.	HDD փոխարինում ներառյալ 500գբ 7200ռպմ նոթբուքի համար(500GB 7200RPM for notbook) համարժեք SSD	20000
40.	Ram-ի փոխարինում ԴԴՌ2 2գբ (DDR2 2GB) ներառյալ Ram-ը	4800
41.	Ram-ի փոխարինում ԴԴՌ3 2գբ (DDR3 2GB) ներառյալ Ram-ը	8000
42.	Ram-ի փոխարինում ԴԴՌ3 4գբ (DDR3 4GB) ներառյալ Ram-ը	10400
43.	Ram-ի փոխարինում ԴԴՌ4 4գբ (DDR4 4GB) ներառյալ Ram-ը	14400
44.	Մոնիտորի փոխարինում (ներառյալ մոնիտորը 15.6" LED, 15.6 LED Slim, 15.6 LED Full HD 17.3 LED	44000
45.	մայրական տպասալի վերանորոգում (վնասված միկրոսխեմաների, չիպերի, բնիկի, և պահեստամասերի փոխարինում) չվերանորոգման դեպքում մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը	16000
46.	ստեղնաշարի փոխարինում նորով համապատասխան ստեղնաշարով	12000
47.	սնուցման բլոկի փոխարինում նորով համապատասխան բլոկով	9600
	UPS-ի	
48.	Վերանորոգում, վերաչափաբերում (ներառյալ վնասված պահեստամասերը, տպասալ, տռանզիստոր, միկրոսխեմա, տռանսֆորմատոր և այլ պահեստամասեր)	2400
49.	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/4,5Ա	5600
50.	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/7Ա	7200
51.	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/9Ա	12000
52.	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/12Ա	16000
53.	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/18Ա	20000
	Մոնիտորի	

54.	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 17" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	8720
55.	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 19" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	13600
56.	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 20"-22" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	20000
57.	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 43" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	32000

Տպիչի

58.	Դիագնոստիկա սև և գունավոր, Պրոֆիլակտիկա սև և գունավոր	4000
59.	Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	11200
60.	Լազերային տպիչի HP LJ HP59A (black), 26A, CF217A, 13A, 35A , 36A, 85A, 49A քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	2400
61.	Լազերային տպիչի CANON EP-27, 703, 725,FX-10, 712 քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	2400
62.	Լազերային տպիչի **SAMSUNG MLT-D104S, MLT-D111, MLT-D101, ML-1610D2** քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	2400
63.	Լազերային տպիչի **PANTHUM PC-211EV** քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	3200
64.	Գունավոր լազերային տպիչի **415A (Black, Yellow, Magenta, Cyan), 410A (Black, Yellow, Magenta, Cyan)** քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	5200
65.	Գունավոր թանաքաշիթային տպիչի **Epson L110 տպիչի լիցքավորում Epson T6641, 6644, 6643, 6642 (Black, Yellow, Magenta, Cyan)** թանաքով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	5600
66.	Գունավոր թանաքաշիթային տպիչի **Canon pixma G1420 տպիչի լիցքավորում Canon GI-41(Black, Yellow, Magenta, Cyan)** թանաքներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև	1200

	տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	
67.	Լազերային պատճենահանող սարքի Canon **IR2016J/IR2420-ի** քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4800
68.	Լազերային պատճենահանող սարքի Canon **IR2425-ի** քարթրիջի լիցքավորում համապատասխան տոներով, վնասված կամ մաշված պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը և չիպը (թմբուկ, կարատրոն,մագնիսական լիսեր, մաքրող դանակ, չափիչ դանակ) ապահովելով մինչև տոների վերջանալը անթերի և մուգ տպագրություն:	4800
69.	Մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը HP/Canon/Samsung/Panthum/Epson	5600
70.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռ(HP / Canon / Samsung / Panthum/ Epson)	4000
	Թանաքաշիթային տպիչի	
71.	Դիագնոստիկա	
72.	Լիցքավորում սև ներկով մինչև 10 մլ քանակով,	1600
73.	Լիցքավորում գունավոր ներկով մինչև 10 մլ քանակով	800
74.	Լիցքավորում սև ներկով 10-20 մլ քանակով	1200
75.	Լիցքավորում գունավոր ներկով 10-20 մլ քանակով	1200
76.	Լիցքավորում գունավոր ներկով 20 մլ-ից ավել քանակով	1600
77.	Տպող գլխիկի փոխարինում ներառյալ գլիխիկը /Canon/ EPSON/	2000
	Պատճենահանող սարքի	40000
78.	Դիագնոստիկա , պրոֆիլակտիկա սև կամ գունավոր	
79.	Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	3200
80.	(Canon IR2016J/IR2420) տպիչի Վառարանի փոխարինում նորով ներառյալ վառարանը	11200
81.	(Canon IR2425) տպիչի Վառարանի փոխարինում նորով ներառյալ վառարանը	48000
82.	Canon /iR2016J/iR2420/iR2425 պատճենահանող սարքի Սքաների բլոկի փոխարինում ներառյալ լբլոկը A4/A3 կամ համարժեք	48000
83.	Ատամնանիվների փոխարինում ներառյալ ատամնանիվները	56000
		7200

Անսարքությունների վերացումը՝ Պատճենահանման սարքի, թանաքաշիթային տպիչի, լազերային տպիչի, սկաների, անխափան սնուցման սարքի, մոնիտորի, նոթբուքի, համակարգչի և քարթրիջի լիցքավորումը պետք է կատարվեն մեկ – երկու օրվա ընթացքում: Ծառայության առանձնահատկությունից ելելով անհրաժեշտության դեպքում ծառայությունները մատուցվելու են տեղում:

Քարթրիջի լիցքավորված տոները Static Control կամ համարժեքը:

Քարթրիջի լիցքավորված տոների քաշը պետք է համապատասխանի գործարանի կողմից տրված կշռին համապատասխանաբար ըստ տեսակի:

Գները առաջարկել մեկանգամյա սպասարկման համար

Լրացուցիչ՝

Վերանորոգման ենթակա սարքերի և սարքավորումների տեղափոխումը վերանորոգման և ետ վերադարձը իրականացվում է կատարողի միջոցների հաշվին:

Պրոֆիլակտիկան պետք է ներառի սարքերի և սարքավորումների, գործածվող նյութերի, դրանց իրանի, վիդեոքարտի, պրոցեսորի և դրանց հովացուցիչների մաքրում և յուղում, պրոցեսորի հովացման տերմոպաստայի նորացում, թարմացում, կատարողի միջոցներով:

Համակարգչի, սերվերի, նոթբուքի, մոնիտորի, տպիչի, պատճենահանող սարքի, սկաների և այլ սարքերի ու սարքավորումների վերանորոգումը պետք է ներառի մաշված, վնասված կամ խափանված մասերի փոխարինում նոր պահեստամասերով՝ վերադարձնելով փոխարինված պահեստամասերը պատվիրատուին:

Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից և լինեն նոր, յուրաքանչյուր փոխարինված պահեստամաս պետք է վերադարձվի պատվիրատուին, վերանորոգված սարքավորման հետ միասին:

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել առանձին պահեստամասեր Կատարողից, տեղում պատվիրատուի կողմից տեղադրվելու նպատակով:

Եթե ծառայությունը սահմանված ժամկետում չի մատուցվել, ապա անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման համար պետք է տրամադրվի աշխատող այլ համապատասխան սարքեր և սարքավորումներ:

Յուրաքանչյուր մատուցված ծառայություն կամ կատարված աշխատանք Պատվիրատուին հանձնվում է համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիմքով, և պարտադիր տեղում ստուգելով պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ սարքերի և սարքավորումների աշխատունակությունը:

Քարթրիջի լիցքավորման ժամանակ մաշված, վնասված կամ խափանված մասերը պետք է փոխարինվեն նոր պահեստամասերով, ներառյալ քարթրիջի իրանի և չիպի փոխարինումը:

Քարթրիջների լիցքավորումը (լազերային և թանաքաշիթային) պետք է կատարվեն 1-2 աշխատանքային օրվա ընթացքում:

Նոր վերալիցքավորված քարթրիջը պետք է մինչև տոների վերջանալը տպի անթերի (այլապես պետք է Կատարողի միջոցների հաշվին վերացվեն առաջ եկած թերությունները)՝ ապահովելով բարձր որակ, մուգ տպագրություն:

Կատարողը տեղում յուրաքանչյուր լիցքավորված քարթրիջը Պատվիրատուին հանձնելիս պետք է ցույց տա քարթրիջի անթերի աշխատանքը:

Լիցքավորվող տոները և փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն որակյալ և նոր՝ Static Control կամ համարժեքը:

Քարթրիջում լիցքավորված տոների կշիռը պետք է համապատասխանի առնվազն գործարանային կշռին (համապատասխանաբար ըստ մոդելների), ապահովելով քարթրիջին համապատասխան տպագրված էջերի քանակ:

Կատարողը պետք է ունենա համապատասխան սերվիս կենտրոն(ներ), ծառայությանը համապատասխան սերտիֆիկացված մասնագետ (ներ), կատարողի կողմից տրվի կատարված աշխատանքների երաշխիքային ժամկետ (նվազագույնը 6 ամիս):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Պետական պահպանության ծառայության	<<Մանվել Ջալավյան>> ԱՁ
ք. Երևան,Պռոշյան փ. 1-ին փակուղի 20	ք. Երևան Մոսկովյան 25 3/1
ՀՀ Ֆինանսների նախարարության	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2050032155921001
Հ/h 900011004497	ՀՎՀՀ 82934656
ՀՎՀՀ 00006796	
Պետ Ս. Հովհաննիսյան	ԱՁ Մ. Ջալավյան

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

																ՀՀ դրամ
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50311120/1	համակարգչային սարքերի պահպանման – վերանորոգման ծառայություններ	-	200000	300000	400000	500000	550000	600000	650000	700000	800000	900000	1000000	1000000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Պետական պահպանության ծառայության
ք. Երևան,Պռոշյան փ. 1-ին փակուղի 20
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/h 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ Ս. Հովհաննիսյան

ԿԱՏԱՐՈՂ
<<Մանվել Ջալավյան>> ԱՁ
ք. Երևան Մոսկովյան 25 3/1
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

ԱՁ Մ. Ջալավյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն